



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Զորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրական գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու.և մշակույթ, թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼՍՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	54
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈԼՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ՆԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈԸՉԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Մարգարյան</i>	

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ Ե ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԼԵԶՈՒԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Մարիանա Սարգսյան
Երևանի պետական համալսարան

Հողվածի նպատակն է՝ քննարկել շոտլանդական ինքնության հիմնահանգի-
րը՝ հղում կատարելով առավելապես խնդրի վերաբերյալ առկա պոստմոդեռնիս-
տական հայեցակերպին: Կատարված հետազոտության շրջանակներում ուսում-
նասիրվում են «շոտլանդական» և «բրիտանական» ինքնությունները, դրանց
փոխներթափանցումները՝ ազգայինի և պետականի համատեքստում: Ինքնութ-
յան խնդրի քննարկման անհրաժեշտությունը բխում է ժամանակակից աշխար-
հում տեղի ունեցող համաշխարհայնացման գործընթացով, որի արդյունքում կա-
րող են ի սպառ անեանալ ազգային մշակույթը, լեզուն և գրականությունը բնորո-
շող տարրերը: Այսպիսով, յուրաքանչյուր ազգային լեզվամշակութային համա-
կարգը հասկանալու և հնարավորինս լիարժեք գնահատելու համար անհրա-
ժեշտ է ուսումնասիրության համար մեկնարկային կետ ընդունել ինքնության
խնդիրը՝ դիտարկելով վերջինս ինքնության ձևավորման, զարգացած և կայաց-
ման լայն համատեքստում:

Բանալի բառեր՝ *Շոտլանդիա, ազգային և պետական ինքնություն, փոխներ-
թափանցում, պոստմոդեռնիստական հայեցակերպ:*

Ներածություն

Այն փաստը, որ *Մեծ Բրիտանիան* հաճախ անվանակոչվում է *Անգլիա* և որ
շատ հաճախ *Բրիտանիա* և *Անգլիա* տեղանուններն օգտագործվում են որպես
հոմանիշներ, թեև երկու տեղանուններն էլ ունեն հստակ տարանջատված ի-
մաստներ, գրեթե զարմանք չի հարուցում: Այլ հարց է, թե ինչպես են վերաբեր-
վում Բրիտանիայում բնակվող ժողովուրդները այն հարցին, երբ իրենց բնորոշե-
լիս օգտագործվում է առավել սահմանափակ իմաստ ունեցող «անգլիացի» բառը:
Այս խնդրի ողջ սրությունը կարելի է լիարժեք հասկանալ՝ անմիջականորեն հա-
րաբերվելով բրիտանացիների հետ:

Ինչպես վկայում են փաստերը, շոտլանդացիներն առավել զգայունն են այս
հարցի նկատմամբ, և նրանց հետ նույնիսկ առօրյա թեմաներով շփվելիս միան-
գամայն ակնհայտ է դառնում այն, որ նրանք իրենց ամեննին չեն նույնականաց-
նում ո՛չ բրիտանացու, ո՛չ էլ առավել ևս անգլիացու հետ: Այս հանգամանքն ինք-
նին ակնհայտ է դարձնում ինքնության խնդրի սուր դրվածքը, ինչն էլ իր հերթին
մի կողմից առաջ է բերում «շոտլանդացի - բրիտանացի», իսկ մյուս կողմից՝ «շոտ-
լանդացի-անգլիացի» հակադրությունների բացահայտման անհրաժեշտություն,
այն է՝ հետևողականորեն ուսումնասիրել ինքնության խնդիրը՝ պեղելով և դուրս

բերելով տարբերակիչ հատկանիշների այն ողջ սպեկտրը, որոնցում ամփոփված է շոտլանդական ինքնությունը: Իսկ այդ տարբերակիչ գծերն ակներև են բոլոր ասպարեզներում՝ պատմություն, հասարակություն, տնտեսություն, մշակույթ, գրականություն և լեզու: Եվ ակամայից հարց է բխում, թե արդյոք պատմական որևիցե իրադարձություն կարող է այնքան մեծ ազդեցություն ունենալ, որպեսզի վերջինիս ներքո ստեղծվի նոր ազգային ինքնություն և ի սպառ անէանան ազգայինը բնորոշող ինքնատիպ տարրերը: Ահա այս հիմնորոշիչ հարցադրումն է, որը հիմք կհանդիսանա շոտլանդական ինքնության խնդրի լուսաբանմանն ուղղված այս հոդվածում:

Միավորման ակտը (1707թ.)

«Շոտլանդիա» տեղանունը լսելիս, մարդիկ, ովքեր ունեն աշխարհագրության բազային գիտելիքներ, միանգամից կպատկերացնեն Բրիտանիայի հյուսիսային հատվածը՝ Էդինբուրգ մայրաքաղաքով: Առավել քաջածանոթ մարդկանց մոտ Շոտլանդիան անմիջապես կարող է ասոցացվել ածիկի վիսկիի (malt whiskey) կամ գոլֆի ու կյոռլինգի (curling), իսկ առավել գիտակների շրջանում՝ ազգային կերակրատեսակ հագիսի (haggis), պարկապզուկի (bagpipe), կարճ ծալավոր շրջազգեստի (kilt), վանդակավոր նախշի (tartan), ուղտափշի (thisle) հետ, և այնպիսի տոնակատարությունների հետ՝ ինչպիսիք են Բըրնսի ընթրիքը (Burns supper) կամ Հայլենդի խաղերը (Highland games): Շոտլանդիան հրապուրիչ է իր ազդու լեռներով, լեռնագոգերով (glens) և հայելափայլ լճերով (lochs):

Իհարկե, այս բոլոր իրակությունները շոտլանդական մշակույթի միայն մակերեսային դրսևորումներն են, որոնք այժմ համալրում են այն գայթակղիչ բառամթերքը, որով ողողված են զբոսաշրջիկների համար նախատեսված տեղեկատվական փաթեթները: Այս հանգամանքը վերջին շրջանում իր հերթին առաջ է բերել այլ բնույթի հարցադրումներ ևս, մասնավորապես, այն հարցի շուրջ, թե արդյո՞ք շոտլանդական մշակույթը սահմանափակվում է միայն վերը թվարկված, մշակութային իրական արժեքը ստվերող սակավաթիվ ենթամշակութային տարրերով և իրակություններով (Roots and Fruits of Scottish Culture 2014)¹: Սակայն, թողնելով այս հարցի պարզաբանումը մի կողմում, անդրադառնանք հարցի՝ մեզ համար էական այն կողմին, թե արդյո՞ք հնարավոր է խոսել Շոտլանդիայի՝ որպես առանձին երկրի կամ պետության և շոտլանդացիների՝ որպես ազգության կամ հասարակության մասին, իսկ որ առավել արդիական է, առանձնացնել «շոտլանդական ինքնություն» հասկացությունը:

Անշուշտ, եթե ընդունենք հասարակության բրիտանացի սոցիոլոգ Ա. Գիդենսի սահմանումը, ըստ որի «հասարակությունը մարդկանց խումբ է, ովքեր ապրում են որոշակի տարածքում և գիտակցում են իրենց անհատական-տարբերակիչ գծերը այլ խմբերից», ապա այս առումով անհերքելի է շոտլանդական հասարակության գոյության փաստը: Սակայն հասարակությունը բնութագրվում է նաև քաղաքական միասնականության տեսակետից (McCrone 1992) և այս առումով շոտլանդական հասարակության՝ որպես ինքնուրույն խմբի, գոյության հարցը դառնում է վիճահարույց, քանի որ 1707 թվականի Միավորման (Ունիայի) ակտով (the Act of Union) վերացան առանձին պարլամենտները, և հիմնվեց Մեծ Բ-

րիտանիայի միասնական պարլամենտը: Վերջինս Շոտլանդիայի համար նշանակեց քաղաքական ազատության իրավունքի հանձնում, թեպետև որոշ առումներով պահպանվեցին եկեղեցական, իրավական և կրթական ինստիտուտների անկախությունը: Այս իրադարձությունն անջնջելի ազդեցություն ունեցավ «ազգային ինքնություն» հասկացության վերամեկնաբանման համար, իսկ շոտլանդացիներին՝ բրիտանական նոր պետությունում վերաբնորոշման և նույնականացման մարտահրավեր էր նետված:

Այսպիսով, Անգլիայի և Շոտլանդիայի միավորումն իրականություն դարձավ 1707 թվականին², երբ ձևավորվեց Միացյալ Թագավորությունը: Այս միավորումը տեղի ունեցավ տնտեսական և քաղաքական նկատառումներով, քանի որ շոտլանդական քաղաքական վերնախավը գաղութային գործարքների պատճառով հայտնվել էր սնանկացման եզրին, և Շոտլանդիան հարկադրված էր օգնություն խնդրել Անգլիայից: Հասարակության լայն շրջանակներում այդ ժամանակահատվածում այս գործարքը գնահատվեց նվաստացուցիչ, քանզի անտեսվել էր հասարակության լայն զանգվածի կարծիքը:³

Իհարկե, հասարակության լայն շրջանում զայրույթը մեծ էր, և ընդհանուր առմամբ շոտլանդացի ազնվականների արարքը դիտարկվեց որպես դավաճանություն, այնուամենայնիվ, համաձայն պատմական փաստերի վերաբերյալ առկա կարծիքների, այդ որոշումը չափազանց գործնական էր և բխում էր երկուստեք տնտեսական շահերից: 1700-ական թվականներին վերջնականապես ջախջախվեցին Շոտլանդիայի կողմից Պանամայում (West Indies) ընթացող գործարքներում Անգլիայի հետ մրցակցության հավակնոտ ջանքերը,⁴ ինչի հետևանքով երկիրը շուրջ չորս հարյուր հազար ֆունտ ստերլինգի վնաս կրեց, որը կազմում էր Շոտլանդիայի ողջ կապիտալի ուղիղ կեսը: Ահա թե ինչու որոշ շրջանակներում Անգլիայի հետ միավորումը Շոտլանդիայի համար բարեկեցիկ ապագայի երաշխիքը դարձավ: Պետք է անպայման նշել նաև այն փաստը, որ միավորմանը վերջնականապես նպաստեց նաև բողոքական եկեղեցու պրեսբիտերական ճյուղը ներկայացնող Շոտլանդական եկեղեցու և Անգլիկան եկեղեցու միջև ձեռք բերված համաձայնությունն առ այն, որ Շոտլանդիայի բողոքական եկեղեցին կպահպանի իր անկախությունը:

Այսպիսով, Միավորման ակտը քսանհինգ հոդվածից բաղկացած փաստաթուղթ է⁵, որով ակնկալվում էր, որ հավասար պայմաններ կստեղծվեն Անգլիայի և Շոտլանդիայի համար: Ավելին, վերջինով Անգլիան պարտավորվեց աջակցություն տրամադրել Շոտլանդիային արտաքին պարտքերի մարման հարցում: Իսկ երբ այդ պայմանը կատարվեց, այն էդիմբուրգում գնահատվեց որպես կաշառք, ինչն էլ հանգեցրեց բողոքների շղթայի:

Միավորումը և բրիտանական ինքնության ձևավորման հիմքերը

Ոչ Անգլիայում, ոչ էլ Շոտլանդիայում ակնկալիքները մեծ չէին միավորումից, որքան էլ որ այն հետապնդեր լավագույն նպատակներ երկու կողմերի համար: Միավորման ակտն ի գործու չէր վերացնելու երկու ժողովուրդների միջև դարավոր լարվածությունը, և հետևաբար միավորմանը հաջորդող տարիների ընթացքում սպասելիքներն ուշանում էին: Աստիճանաբար բարձրացավ միավորման

ակտը չեղարկելու ալիքը, ինչը նաև առավել բուռն արտահայտություն ստացավ Յակոբիսոնների շարժման հասունացմամբ⁶:

Միացյալ Թագավորության ձևավորման առաջին հիսուն տարիների ընթացքում տեղի ունեցան երկու ապստամբություններ, որոնք շոտլանդացիների համար ավարտվեցին պարտությամբ (1746 թ. Քալլոդենի ճակատամարտը): Ավելի ուշ հաջորդեցին լեռնային գոտիների էթնիկական գոռումները, կլանային համակարգի վերացումը և բնակչության տեղահանումները՝ պայմանավորված ագրարային ոլորտի բարեփոխումներով: Վերջինիս արդյունքում էլ հարյուր հազարավոր շոտլանդացիներ ստիպված քեցին երկիրը՝ արտագաղթելով Միացյալ Նահանգներ, Կանադա, Ավստրալիա, կամ Մեծ Բրիտանիայի առավել զարգացած արդյունաբերական կենտրոններ: Համաձայն վիճակագրական տվյալների՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Շոտլանդիայից արտագաղթածների թիվը հասնում էր շուրջ 2 միլիոնի:

Այս պահին թողնելով պատմական իրադարձությունների քննարկումը մի կողմում՝ փորձենք Միավորման ակտի և դրան հաջորդած իրադարձությունների համատեքստում ուսումնասիրել «բրիտանացի» հասկացության էությունը և հասկանալ, թե արդյո՞ք պատմական իրադարձությունը, ինչպիսին Միավորումն է, կարող էր հիմք հանդիսանալ «բրիտանացի» ինքնության ձևավորման համար և հարցադրել շոտլանդական ինքնության գոյությունը:

Դատելով պատմական իրադարձություններից, ինչպես նաև նկատի ունենալով շոտլանդացիների և անգլիացիների էթնիկական ծագումը⁷, կարելի է ենթադրել, որ «Բրիտանիա» և «բրիտանացիներ» հասկացություններն արհեստական ներմուծություններ էին, որոնք սակայն լայն շրջանառության մեջ դրվեցին և իրենց դերակատարությունն ունեցան ընդհանրական անհատականության ձևավորման գործում:

Բրիտանական ինքնության քննության պոստմոդեռնիստական և առավելապես վերջին 20 տարիներին շրջանառվող մեկնաբանությունների և տեսությունների համաձայն՝ խնդրի համակողմ մեկնաբանման տեսակետից նպատակահարմար է հստակ տարանջատում սահմանել «պետական ինքնություն» և «ազգային ինքնություն» հասկացությունների միջև:

Հիմք ընդունելով 1707 թվականը որպես բեկումնային կետ բրիտանական ինքնության ձևավորման գործընթացում, անհրաժեշտ ենք համարում մեր քննարկումը շարունակել հենց բրիտանական պետական ինքնության՝ որպես պատմականորեն ձևավորված իրականության քննության համատեքստում: 1707 թվականի Միավորման ակտը, որպես պատմական օբյեկտիվ փաստ, առիթ հանդիսացավ բրիտանական ինքնության ձևավորման համար, ինչն էլ իր հերթին թույլ է տալիս տարանջատել ինքնության ազգային և պետական բաղադրիչները: Այս տարանջատումը հնարավորություն է ընձեռում լույս սփռելու շոտլանդական ազգային և պետական ինքնության սահմանման հարցում:

Իրականում, Բրիտանիայի և հետևաբար բրիտանական ինքնության ձևավորման չափազանց կարևոր մի հանգամանք ևս արժանի է ուշադրության: “The Break-Up of Britain” աշխատության մեջ Թ. Նեյրնն այն եզրակացությանն է հանգում, որ Բրիտանիան չի կառուցվել ազգաշինության և համակենտրոնացման

սկզբունքով (ինչպես օրինակ Գերմանիան կամ Իտալիան). այն առավելապես ձևավորվել է պատմական չորս ժողովուրդների (անգլիացիներ, շոտլանդացիներ, ուելսցիներ, հետագայում նաև՝ իռլանդացիներ) հիման վրա: Եվ այն հարցին, թե ինչպես բրիտանական պետականությունը կարողացավ իր դիրքը պահպանել փոփոխվող աշխարհում, պայմանավորված էր Բրիտանական կայսրության գոյության հանգամանով, ինչը 20-րդ դարում փոխարինվեց Լոնդոնյան Միթիի ֆինանսական գերհնարավորություններով (Nairn 2001):

Ե՛վ Բրիտանական կայսրությունը և՛ Միթին այն ինստիտուտներն էին, որոնք ապահովել և մինչ օրս էլ (Միթին) շարունակում է ապահովել կապիտալի լուրջ ներհոսքեր: 1970 թվականից Բրիտանիայում նշմարվող ներքին պառակտման միտումները կարելի է մեկնաբանել հենց այն հանգամանքի գիտակցմամբ, որ Միթին այլևս ի գորու չէ նախկինի պես ապահովելու արտաքին կապիտալի ներհոսքեր, այսինքն այն դադարում է իր հիմնական գործառույթն իրականացնելուց (Nairn 2001): Զարգացող ազգայնական շարժումը (Շոտլանդիա, Ուելս, Հյուսիսային Իռլանդիա) հենց այդ սոցիալ-տնտեսական փոփոխությունների արձագանքն է: Քանի որ Բրիտանիան այլևս չէր կարող նախկինի պես բոլորի համար շահեկան պայմաններ ապահովել, ուստի վերջինս պարարտ հող նախապատրաստեց անկախությունը ետ բերելու հարցի հասունացման համար:

Բրիտանական ինքնությունն ըստ պոստմոդեռնիստական ընկալման առավելապես կայսերապաշտական է իր բնույթով (*imperial identity*)՝ սերտորեն կապված և պայմանավորված բրիտանական կայսրության գոյության հանգամանքով (Nairn 2001):

Այս առումով հարկ է անդրադարձ կատարել նաև Ռ. Քոուենի այն տեսակետին, ըստ որի բրիտանական ինքնությունը «քող» ինքնություն է, որի ներքո միավորված են մի քանի ինքնություններ, բայց վերջիններս ամենևին չեն փոխարինվել մեկը մյուսով: Այս տեսակետից բրիտանական ինքնությունը որպես պետական ինքնություն ընկալելու սկզբունքն առավել հիմնավորված բնույթ է կրում (Cohen 2000:575-582):

Վերը նշվածին գրեթե համարժեք կարծիք հանդիպում ենք Լ. Քոլլիի աշխատության մեջ, սակայն մեկ բացառությամբ. պատմաբանը Միավորման համար անհրաժեշտ հանգամանք է համարում նաև արտաքին թշնամուց՝ Ֆրանսիայից պաշտպանվելու անհրաժեշտությունը (Colley 2009:372-385): Այդ ժամանակահատվածում առկա էր որոշակի պառակտում բողոքականների շրջանում (Շոտլանդիայի պրեսբիտերական և Անգլիկան եկեղեցու միջև), այնուամենայնիվ որպես բողոքականներ, երկու եկեղեցիներն էլ պատրաստ էին դիմակայելու Ֆրանսիայի կողմից պարտադրվող կաթոլիկությանը: Ըստ Լ. Քոլլիի, հենց այս սահանացող սպառնալիքն էր, որը վերջին հաշվով նպաստեց բրիտանական ինքնության ձևավորմանը (Colley 2009:372-385): Բրիտանական ինքնությունը ձևավորվել է մեկ համընդհանուր բողոքական հավատքի հիման վրա, և ինքնության այս տեսակն առավել բարձր է դասվում քան յուրաքանչյուր ազգի ինքնությունն առանձին վերցված:

Շրջանառության մեջ առկա տեսակետներն ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ բրիտանական ինքնությունը «քող» ինքնություն է, որի ներքո սակայն

պահպանվել են այլ ազգային ինքնություններ, և այս մեկնաբանությունը կարծես թե համահունչ է բրիտանականը՝ որպես «պետական», իսկ շոտլանդականը՝ որպես «ազգային» ինքնություն դիտարկելու վերաբերյալ առկա տեսակետների հետ:

Այսպիսով, երկու հիմնարար եզրակացություն, որոնց կարելի է հանգել նյութի քննարկման արդյունքում այն է՝ ա) բրիտանական կայսրությունը բրիտանական ինքնության ձևավորման և կայացման եթե ոչ միակ, ապա առավել կարևոր պատմական բաղադրիչն է, բ) բրիտանական ինքնության ձևավորման կարևոր մեկ այլ հանգամանք կապված է հնարավորությունների այն լայն դաշտի հետ, որը բացվեց Շոտլանդիայի համար:

Բրիտանական միապետության ծաղկուն շրջանում հաջողակ շոտլանդացիների համար բրիտանացի կոչվելը պատվաբեր էր և թույլ էր տալիս օգտվել արտոնություններից: Աստիճանաբար, այն ինչ բնորոշ էր շոտլանդական մշակույթի համար, դարձավ բրիտանական անհատականության մասը: Շոտլանդական գրականությունը, լեզուն, արդարադատության համակարգը, ազգային հագուստը, երաժշտությունը, պարերը, կրոնական պաշտամունքը և կլանային համակարգը ընդունվեցին որպես բրիտանական անհատականության մաս: Շոտլանդացիների և անգլիացիների փոխադարձ հակակրանքը մեկնաբանվեց որպես ազգային բնավորության առանձնահատկություն⁸: Մակայն առավել խորքային մակարդակում ո՛չ անգլիացիները և ո՛չ էլ շոտլանդացիները բավարարված չէին միավորման հանգամանքով: Մի կողմից շոտլանդացիները պետք է համակերպվեին իրենց անկախության կորստի հետ՝ դրա դիմաց ստանալով առավել լայն հնարավորությունների շրջանակ, մյուս կողմից՝ անգլիացիներն այս միավորման մեջ տեսան միայն Անգլիայի անվտանգության ապահովման հնարավորությունը, քանի որ որևիցե այլ եվրոպական երկիր չէր կարող օգտագործել Շոտլանդիան ի հակակշիռ Անգլիայի: Ավելին, անգլիացիներն ակնկալում էին, որ բրիտանական ինքնությունը կնպաստի շոտլանդացիների ապամշակութայնացման հարցում՝ վերջիններիս հնարավորինս ձուլելով անգլիական մշակույթի հետ, քանի որ անգլիացու համար բրիտանացի լինելը հավասարազոր է աշխարհին որպես անգլիացի ներկայանալուն (Osmond 1988:26): Այս տեսակետը սակայն անհամատեղելի էր շոտլանդացիների՝ բրիտանական պետականության պայմաններում իրենց ինքնությունը պահելու ակնկալիքների հետ:

Բրիտանական ինքնությունը Շոտլանդիայում

Վերադառնալով «հասարակություն» հասկացության այն սահմանմանը, ըստ որի վերջինս բնութագրվում է նաև «քաղաքական միասնականությամբ» (տե՛ս էջ 125), հարկ է նկատել, որ շոտլանդական ինքնության գոյության հարցն այս տեսակետից դառնում է խնդրահարույց, իսկ շոտլանդական հասարակության՝ որպես առանձին խմբի գոյության հարցը լրացուցիչ հիմնավորման անհրաժեշտություն ունի:

Իհարկե ներկայումս գործում է Շոտլանդիայի պարլամենտը, սակայն վերջինիս լիազորությունները սահմանափակ են, իսկ բոլոր տնտեսական և քաղաքական հարցերը վերապահված են Մեծ Բրիտանիայի պարլամենտին: Այս իսկ

պատճառով, որոշ մասնագետներ հակված են շոտլանդական հասարակությունը որակելու որպես «քաղաքացիական հասարակություն» (McCrone 1992)՝ դրանով իսկ տարանջատելով հասարակության քաղաքական և սոցիալական կողմերը: Հետևաբար, ինքնըստինքյան դուրս է մղվում նաև շոտլանդական պետականության հարցը: Հետևաբար, «ո՞րն է Շոտլանդիայի կարգավիճակը Մեծ Բրիտանիայի կազմում» և «ովքե՞ր են շոտլանդացիները» հարցերը շարունակում են մնալ վիճահարույց:

Շոտլանդացիները ժողովուրդ են (ըստ Դ.Մաքքենի՝ պետականություն չունեցող ժողովուրդ)՝ մարդկանց խումբ, ովքեր միմյանց հետ կիսում են պատմական, լեզվական, մշակութային և էթնիկ ընդհանուր հատկանիշներ: Եվ հենց այս հատկանիշներն են, որոնք վերջ ի վերջո նպաստել են շոտլանդական ինքնության պահպանման և խնդրի անհերքելիության փաստի կայացմանը:

Այսպիսով, ի՞նչ է ինքնությունը: Համաձայն բառարանային սահմանման «ինքնություն ասելով նկատի են առնվում այն տարբերակիչ առանձնահատկությունները, որոնցով որոշվում է, թե ով է մարդը կամ իրը» (<<https://en.oxforddictionaries.com/definition/identity>>), կամ ըստ մեկ այլ սահմանման՝ «իրերի կամ մարդկանց միջև էական կամ ընդհանուր գծերի նմանությունն է» (<<https://www.merriam-webster.com/dictionary/identity>>):

Ինքնությունն անշարժ և հիմնարար վիճակ չէ, այլ ընդհակառակը՝ այն փոփոխական է, կախված համատեքստից, այն հարաբերական է և անցումային (Edensor 2002): Ասել է թե շոտլանդական ինքնություն ասելով նկատի չունենք, այն, թե բոլոր շոտլանդացիները նման են իրար, հետևաբար, ազգային ինքնություն ասելով հասկանում ենք այն բոլոր տարբերակիչ և միավորիչ հատկանիշները, որոնցով ազգային խմբերը տարբերվում են միմյանցից:

Համաձայն մեկ այլ կարծիքի, ազգային ինքնությունը նկարագրում է մի այնպիսի վիճակ, երբ մարդկանց խմբի բոլոր անդամներն իրենց նույնականացնում են ազգային խորհրդանիշների մակարդակում՝ այսպիսով հնարավորություն ընձեռելով խմբին հանդես գալու որպես մեկ հոգեբանական խումբ (Bloom, 1993:52):

Այս իմաստով որպես առավել ակնհայտ խորհրդանիշներ կարելի է առանձնացնել Շոտլանդիայի դրոշը, ազգային հիմնը և Ճակատագրի քարը (Stone of Destiny; Stone of Scone)՝: Վերջինս դարեր շարունակ կիրառվել է շոտլանդական արքաների թագադրության ժամանակ և դարձել է ազգայնականության առավել հզոր խորհրդանիշներից մեկը:

Հասկանալու համար, թե ինչ նշանակություն ունեն բրիտանական իրականությունը Շոտլանդիայի համար, և ինչ դրսևորում ստացավ բրիտանական ինքնությունը շոտլանդական իրականության համատեքստում, անհրաժեշտ է ուշադրությունը բևեռել սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքում տեղ գտած փոփոխություններին: Ըստ շոտլանդական տնտեսության ոլորտի առավել ակնառիվ փորձագետ Թ. Դիվայնի՝ Բրիտանական կայսրության գոյության ժամանակահատվածում շոտլանդացիները հաջողություն ունեցան երկու ասպարեզներում՝ առաջինը առևտրի, երկրորդը՝ ծառայությունների ոլորտներում (Devine 2003:69-93): Միայն ծխախոտի և շաքարավազի ներկրման հա-

մար Շոտլանդիային տրված իրավունքը (կայսրություն ներկրվող ապրանքների շուրջ 40 տոկոսը ներկրվում էր Գլազգոյի նավահանգստի միջոցով) հսկայական կապիտալի ներհոսք ապահովեց դեպի Շոտլանդիա՝ նպաստելով բանկային համակարգի, ինչպես նաև Գլազգոյի տարածաշրջանի արդյունաբերական առաջընթացի համար:

Բրիտանական կայսրության գաղութային գերտերություն լինելու հանգամանքը ենթադրում էր նաև, որ վերջինս հզոր ռազմական ուժ էր, իսկ դրա կայացման համար պակաս կարևոր չէր շոտլանդացիների ներդրումն այս գործում: 18-րդ և 19-րդ դարերում բրիտանական բանակում շոտլանդացիները թվով գերակշռում էին, նախ այն պատճառով, որ շոտլանդացիների համար վարձու զինվորական ծառայությունն առավել ընդունելի ծառայության տեսակ էր՝ պայմանավորված լեռնային գոտիներում աղքատության բարձր մակարդակով: Մյուս կողմից դրան նպաստեց լեռնային գոտիների բնակիչների՝ իրենց ռազմիկների կաստային դասելու կարծրացած մոտեցումը:

Ըստ տվյալների շոտլանդացիները ներկայացված էին ոչ միայն ռազմական ասպարեզում, այլև գաղութներում (Կարիբյան կղզիներ, Հնդկաստան, Ավստրալիա) վարչական և կառավարչական բարձր պաշտոններում, հետագայում նաև հենց Անգլիայում՝ զբաղեցնելով բարձր պաշտոններ: Շոտլանդացիները չափազանց հաջողակ էին պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու հարցում՝ մինչև նույն ժամանակ այս հանգամանքն արդյունավետորեն օգտագործվում էր համայնքների ստեղծման և բողոքական հավատքի տարածման համար (Colley 2009; Devine 2006): Այսպիսով, ըստ Թ. Դիվայնի, շոտլանդացիներն այդ ժամանակահատվածում իրենց դրսևորում էին որպես կայսրության կերտողներ, ինչն էլ իր ներգործությունն ունեցավ շոտլանդացիների ինքնության վերաիմաստավորման համար՝ դարձնելով վերջիններիս առավելապես բրիտանական արժեքների կրողներ:

Բացի այն ներգրավվածությունից, որ շոտլանդացիներն ունեին ռազմական և պետական կառավարման ասպարեզում, հարկ է նաև անդրադառնալ արդյունաբերական առաջընթացին և կապիտալի ներհոսքին, որն արձանագրվեց Շոտլանդիայում Միավորմանը հաջորդած տարիներին (Whatley 1997:38-63):

Ըստ էության Միավորումը ստեղծեց այն տնտեսական համատեքստը, որը նպաստեց Շոտլանդիայի բարգավաճմանը: Արդյունաբերության զարգացումն իր հետ բերեց նաև հարստության ներհոսք, ապահովեց ներքին և արտաքին շուկաների կայացումը: Եթե նախկինում՝ 18-րդ դարի սկիզբ, ներքին սպառման շուկան կազմված էր միայն առաջին անհրաժեշտության ռեսուրսներից՝ բուրդ, միս, փայտ, ածուխ, ապա որոշ ժամանակահատված անց այս ապրանքների արտահանումից ստացված կապիտալը ներդրվեց արդյունաբերության մեջ, իսկ ապրանքները գտան իրենց սպառման շուկան Անգլիայում, Իռլանդիայում և կայսրության այլ տարածքներում: Շոտլանդացիները մյուս կողմից կարողացան մեծ օգուտ ստանալ նաև Անգլիայից եկող ներդրումներից և անգլիական նոու-հաուլից: Չնայած ինչպես պնդում է Ք. Ուոթլին (Whatley 1997:48), Շոտլանդիան այնքան էլ հետամնաց չէր, որքան ներկայացվում էր, այնուամենայնիվ, Անգլիան առավել զարգացած էր, և հաջողությամբ ներդրումներ էր իրականացնում շոտլա-

նադական բնական ռեսուրսների ոլորտում, որն իր հերթին նպաստեց հանքարդյունաբերության նոր տեխնիկայի և նուր-հաունների ներմուծմանը, ինչպես օրինակ մանող Ջեննին (Spinning Jenny), կամ իրականացված գյուղատնտեսական ռեֆորմները, որոնք միանգամից նպաստեցին շոտլանդական արտադրանքի կտրուկ աճին:

Շոտլանդիայի արդյունաբերականացումը բազմաբարդ գործընթաց էր՝ պայմանավորված այլ հանգամանքներով ևս: Մակայն փաստն այն է, որ 19-րդ դարի ընթացքում Շոտլանդիային հաջողվեց դառնալ աշխարհի քաղաքակենտրոնացված և զարգացած երկրներից մեկը: Անվիճելի է, որ հարստության կայուն ներհոսքը և երկրի բարգավաճման համար ստեղծված հավասար պայմանները հետազոտողները համարում են այն հիմնական պատճառները, որ 19-րդ դարում Շոտլանդիայում որևիցե ազգայնական շարժում չարձանագրվեց: Ավելին, բոլոր ուղղություններով արձանագրված հաջողությունները նպաստեցին բրիտանական պետական ինքնության գիտակցման կայացմանը: Շոտլանդացիները ոչ միայն ընդունեցին, այլև իրենց հավատարմություն էին ցուցաբերում բրիտանական պետական ինքնության հանդեպ (Nairn 2001):

Ըստ Դ. Մաքրոնի՝ բրիտանական ինքնության առավել վաղ օրինակ է “For King and Country” արտահայտությունը, որով շեշտադրվում է ժողովուրդների հավատարմությունը և՛ գահի, և՛ պետության նկատմամբ (McCrone 1997):

Միավորումից մի քանի տասնյակ տարի անց արդեն իսկ բրիտանական ինքնության ընկալումն այնքան էր խորացել, որ նույնիսկ այն մտավախությունն էր առաջ եկել, թե Միության համատեքստում այդքան սերտ համագործակցությունը շոտլանդական ինքնությունը վերջնականապես կձուլի անգլիականի հետ՝ վերացնելով շոտլանդականին բնորոշ բոլոր առանձնահատուկ գծերը (Devine 2006:346-360):

Ամփոփելով, հարկ է կրկին անդրադառնալ Թ. Դիվայնի այն եզրակացությանը, որ կայսրությունը չափազանց մեծ ազդեցություն է թողել Շոտլանդիայի վրա՝ դարձնելով շոտլանդացիներին առավելապես բրիտանացի: Նույնիսկ Վ. Սքոթը, ով Միավորման կրքոտ ջատագովներից էր, այն մտավախությունն էր հայտնում, որ Միավորումը Շոտլանդիային վերջնականապես կձուլի Անգլիայի հետ: Մակայն, դրական և բացասական կողմերով հանդերձ, միավորման գործընթացը ոչ բոլոր շերտերին էր հաճո: Եվ չնայած մտավախություններին՝ ճիշտ հակառակ գործընթացը տեղի ունեցավ: 19-րդ դարի ընթացքում շոտլանդական ինքնությունը սկսվեց վերախմաստավորվել՝ ստանալով իսկապես ազգային ինքնության կարգավիճակ:

Եզրակացություն

Ինքնության խնդրի քննարկման անհրաժեշտությունը բխում է ժամանակակից աշխարհում տեղի ունեցող համաշխարհայնացման լայնածավալ գործընթացներից, որոնք կարող են մշակույթին, լեզվին և գրականությանը բնորոշ ազգային տարրերի չեզոքացման պատճառ հանդիսանալ: Յուրաքանչյուր ազգային լեզվամշակութային համակարգ հնարավորինս լիարժեք գնահատելու և արժևորելու համար անհրաժեշտ է ուսումնասիրության մեկնարկային կետ ընդունել

ինքնությունը՝ վերջինիս ձևավորման, վերափոխման և զարգացման լայն համատեքստում: Այս առումով աշխատանքում քննարկվել է շոտլանդական ինքնության հիմնախնդիրը՝ հղում կատարելով առավելապես խնդրի վերաբերյալ առկա պոստմոդերնիստական հայեցակերպին: Ըստ այդմ՝ շոտլանդական ինքնության և դրանում բրիտանական ինքնության ներթափանցման խնդիրը անհրաժեշտ է դիտարկել ազգային և պետական ինքնությունների փոխներթափանցումների համատեքստում: Այս մոտեցումը թույլ է տալիս լիարժեք գնահատել շոտլանդական ինքնության խնդիրը՝ որպես պատմականորեն ձևավորված հիմնահարց:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ինքնությունն աղավաղող միտումները, որոնք առ այսօր շարունակում են մնալ շրջանառության մեջ, շոտլանդական մասսայական մշակույթի էժանագին տարրերն են, որոնցից “tartanry”-ն զբոսաշրջության զարգացմանը զուգընթաց առավել ընդգծված և հարկադրված դարձավ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին:
Հաջորդը գրականության մեջ այդ նույն ժամանակահատվածում գերիշխող “Kailyardism” դպրոցն էր, որի ներկայացուցիչների ստեղծագործություններում գերիշխող էին շոտլանդական հովիտների անշուք կենցաղի հուզական նկարագրությունները (*Craig, Cairns. Myths Against History: Tartanry and Kailyard in 19th-Century Scottish Literature, in Colin McArthur (ed.) Scotch Reels: Scotland in Cinema and Television. London. BFI Publishing. 1982*):
2. Հարկ է նշել, որ Միավորման ակտից շորջ հարյուր տարի առաջ 1603 թվականին Անգլիան և Շոտլանդիան միավորվել էին, երբ Շոտլանդիայի Ջեյմս 6-րդը դարձավ Անգլիայի Ջեյմս 1-ին արքա: Այս իրադարձությունը երկու երկրների որոշ առումներով իրար մոտեցրեց, որոնցից առավել հիշարժանը թերևս Շոտլանդիայի ներգրավումն էր քաղաքացիական պատերազմում (1642-1651) և դրան հաջորդած Յակոբիտների ապստամբություններում: Այնուամենայնիվ, այս շրջանում արձանագրված քաղաքական փոխգործակցության որոշ միտումներով հանդերձ, 1603 թվականը չհանգեցրեց միասնական պետության ձևավորմանը: Իհարկե այն բեկումնային էր Բրիտանական կայսրության կայացման երկար ուղու համար, սակայն մասնագետների գնահատմամբ բրիտանական ինքնության ձևավորման առումով գրեթե որևէ ազդեցություն չի ունեցել (<https://archive.org/details/scotlandfromtrea00macr>):
3. Այդ գայրույթի և դժկամության վառ արտացոլումն է Ռ.Բրրնսի “Such a Parcel of Rogues in a Nation” ստեղծագործությունը, որում հեղինակը ցատումով է արտահայտում ժողովրդի գայրույթը՝ անգլիացիների խոստացած ոսկու դիմաց սեփական երկրի անկախությունը վտանգած «սրիկաների» դեմ.
The English stell we could disdain,
Secure in valour's station;
But English gold has been our bane-
Such a parcel of rogues in a nation!

4. 1695 թվականին Շոտլանդիայի խորհրդարանականները, գործելով իրենց վերապահված իրավունքի սահմաններում՝ հավանության արժանացրին Աֆրիկայի և Կարիբյան ավազանի երկրների հետ առևտրի նախաձեռնությանը: Այս նախաձեռնությունն առավել հայտնի է «Դարիենի նախագիծ» (The Darien Scheme, Դարիենի՝ ծովածոց Կարիբյան ծովում) անվանմամբ, քանի որ Պանամայում գաղութ ստեղծելը այդ նախագծի նպատակներից մեկն էր: Այդ գաղութը կոչվելու էր Նոր Կալեդոնիա (լատ.՝ Caledonia, այդպես էին կոչում հռոմեացիները Շոտլանդիայի ներկայիս տարածքը): Շոտլանդացիների նպատակն էր այն դարձնել ազատ նավահանգիստ և բաց շուկա համաշխարհային առևտրի համար: Այս նախաձեռնության հեղինակները պարզորոշ տեսնում էին առևտրի ասպարեզում Շոտլանդիայի առաջատար դիրքերի հասնելու հնարավորությունները: Սակայն հուսալքությունը չուշացավ, քանի որ չէին հաշվի առնվել նախ և առաջ անբարենպաստ կլիմայական պայմանները. ավելին, արշավախումբն իր հերթին բավարար մակարդակով զինված չէր: Մյուս կողմից, չափազանց անհաջող ընտրություն էր կատարված բնիկների հետ առևտրի համար ընտրված ապրանքների հարցում: Բնականաբար այս նախաձեռնությունն Անգլիայում լուրջ դիմադրություն ունեցավ, և համապատասխան հրահանգով անգլիական գաղութներին արգելվեց որևէ առնչություն ունենալ շոտլանդացիների հետ: Եվ վերջապես, 1700 թվականին իսպանացիների մեծաքանակ հարձակումից հետո շոտլանդացիները ստիպված լքեցին գաղութը: Ձախողված այս նախաձեռնությունը չափազանց ստորացուցիչ էր շոտլանդացիների համար, ինչի հետևանքով ասելությունն անգլիացիների հանդեպ հասավ իր գագաթնակետին
5. (<https://archive.org/details/scotlandfromtrea00macr>):
6. Փաստաթղթի ամբողջական տեքստը տե՛ս <<http://www.rahbarnes.co.uk/Union/UnionWithEnglandAct.php>>
7. Յակոբիտիզմը քաղաքական շարժում էր (առավել ակտիվ գործունեության շրջանը՝ 1688-1750թթ.), որի նպատակն էր վերականգնել Սթյուարտ արքայատոհմի՝ Անգլիայի գահի նկատմամբ իրավունքները, ինչպես նաև կաթոլիկ եկեղեցու հեղինակությունը: Շարժումն առավել լայն աջակցություն ուներ Ուելսում և Շոտլանդիայում: Հատկապես Շոտլանդիայում այն խստորեն կապված էր Հայլենդի կլանային համակարգի հետ: Շուրջ 60 տարիների ընթացքում ապստամբության հինգ փորձ է կատարվել, և շարժումը վերջնականապես տապալվել է Քալլոդենի ճակատամարտից հետո (<<https://www.britannica.com/topic/Jacobite-British-history>>): Այս իրադարձությանը նվիրվել է լիրիկական երգերի մեծ հավաքածու (<<http://chrsochon.free.fr/charlie2.htm>>):
8. Անդրադառնալով անգլիացիների և շոտլանդացիների էթնիկական ծագմանը՝ պետք է նկատի ունենալ, որ շոտլանդական ժողովուրդը ձևավորվել է կելտախոս երկու ժողովուրդների՝ պիկտերի և գելերի ձուլումից, ովքեր էլ հենց հիմնել են շոտլանդական թագավորությունը (գելերեն Alba) (<http://www.worldlibrary.org/articles/Scottish_people>), մինչդեռ անգլիացիները սերում են բրիտոններից և գերմանախոս ցեղերից՝ անգլեր, սաքսեր, ջութեր և ֆրիզներ

(<<https://www.britannica.com/topic/Briton>>,<<https://www.britannica.com/topic/Anglo-Saxon>>):

9. Շոտլանդացիների և անգլիացիների հակակրանքը ծնունդ է տվել հումորային բազմապիսի մանրապատումների: Օրինակ, շոտլանդացիները սիրում են պատմել այն մասին, թե ինչպես Տերը, ստեղծելով Շոտլանդիան և հիանալով իր ստեղծագործության պտուղներով կանչում է հրեշտակապետ Գաբրիելին, որ վերջինս վայելի այդ տեսարանը: «Պարզապես նայե՛ք», - ասում է Տերը - «Մա իմ լավագույն ստեղծագործությունն է: Հրաշալի լեռներ, քաջարի տղամարդիկ, գեղեցիկ կանայք, հրաշալի բնություն: Եվ ես նրանց տվեցի նաև գեղեցիկ երաժշտություն և վիսկի: Փորձի՛ր այն»: Գաբրիելը համոտեում է վիսկին, գովաբանում Տիրոջը և ասում,- «Բայց չե՞ք կարծում, որ շատ առատաձեռն եք: Չե՞ք վախենում երես տալ նրանց: Միգուցե՞ արժե անդորրը մի փոքր խանգարել», ինչին Տերը պատասխանեց, - «Դու դեռ չգիտես, թե ինչ հարևաններ եմ ես նրանց համար նախատեսել»:

Անգլիացու՝ անգլիացի կոչվելուն հավատարմությունը, և որպես անգլիացի կյանքից հեռանալու ցանկությունը շոտլանդացիները ծաղրում են որպես առավել բարձր ձգտումներ չունենալու հանգամանք: "Man, hiv ye nae ambeetion?" կարձագանքի շոտլանդացի անգլիացու այդ ցանկությանը:

10. Ճակատագրի քարը կիրառվել է շոտլանդական արքաների թագադրության ընթացքում: Ավանդույթի հիմնադիրը Շոտլանդիայի առաջին արքա Քենեթ Մակալփինն է (843-858 թթ.): Դեռևս այդ ժամանակաշրջանից է հաստատվել գահի փոխանցման՝ անգլո-սաքսոնյանից տարբեր շոտլանդական մոդելը: Հետագոտողները հակված են այն կարծիքին, թե շոտլանդական ինքնության առաջին դրսևորումները ծագել են դեռևս այս ժամանակահատվածում: 1296 թվականին Անգլիայի Էդուարդ Առաջին արքան ներխուժեց Շոտլանդիա՝ իր հետ տանելով քարը: Ճակատագրի քարի՝ որպես ազգային ինքնության խորհրդանշի կարևորությունն ընդգծվում է չորս ազգայնական ուսանողների արարքով. վերջիններս, 1950 թվականին առևանգելով քարը՝ այն ետ հանձնեցին Շոտլանդիա: Դա Շոտլանդիայի պատմության վերջին շրջանի առավել նշանակալից իրադարձություններից էր (<<https://www.britannica.com/topic/Stone-of-Scone>>):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bloom, W. (1993) *Personal Identity, National Identity and International Relations*. Cambridge: Cambridge University Press.
2. Cohen, R. (2000) *The Incredible Vagueness of Being British*". // *International Affairs* 76/3, 2000) pp. 575-582.
3. Cohen, A.P. (1997) *Nationalism and Social Identity: who owns the interest of Scotland*. // *Scottish Affairs*, N18, pp. 95-107.
4. Colley, L. (2009) *Britons Forging the Nation 1707-1837*. Revised edition. New Haven and London: Yale University Press.
5. Devine, T.M. (2006) *In bed with an elephant: almost three hundred years of the*

- Anglo-Scottish Union*. // Scottish Affairs N 57, pp. 1-18.
6. Devine, T. M. (2003) *Scotland's Empire 1600-1815*. London: Allen Lane (Penguin).
 7. Devine, T. M. (1994) *The Transformation of Rural Scotland 1660-1815*, Edinburgh: Edinburgh University Press.
 8. Devine, T. M. (2006) *The Scottish Nation 1700-2007*. Reissued edition. London: Penguin.
 9. Edensor, T. (2002) *National Identity, Popular Culture and Everyday Life*. Oxford: Berg.
 10. Kearney, H. (1995) *The British Isles. A History of Four Nations*. Cambridge: Cambridge University Press.
 11. Kearney, H. (1991) *Four Nations Or One?/* Ed. by B. Crick. Oxford: Blackwell.
 12. Marquand, D. (1993) *The Twilight of the British State? Henry Dubb versus Sceptred Awe*. // The Political Quarterly N 64 (2), pp. 210-222.
 13. McCrone, D. (1997) *Unmasking Britannia: the Rise and Fall of British National Identity*. // Nations and Nationalism N4, pp. 579-596.
 14. McCrone, D. (1992) *Understanding Scotland. The Sociology of a Stateless Nation*. London: Routledge.
 15. McCrone, D. (2002) *National Identity in Scotland*. Edinburgh: Edinburgh University Press.
 16. Nairn, T. (2001) *Farewell Britannia: Break-Up or New Union?* New Left Review N 7, pp. 55-74.
 17. *Roots and Fruits of Scottish Culture* (2014) / Ed. by I. Brown and J. Berton. Glasgow: Scottish Literature International.
 18. Osmond, J. (1988) *The Divided Kingdom*. London: Constable.
 19. Whatley, C. A. (1997) *The Industrial Revolution in Scotland*. Cambridge: Cambridge University Press.
 20. *English Oxford Living Dictionaries* (Copyright of 2017). Available at <<https://en.oxforddictionaries.com/definition/identity>> [Accessed October 2017].
 21. *Merriam-Webster* (Copyright of 2017) Merriam-Webster Inc. Available at <<https://www.merriam-webster.com/dictionary/identity>> [Accessed October 2017].

On the Problem of Interpretation of Scottish Identity

The aim of the article is to discuss the problem of Scottish identity with reference to the existing postmodernist conception of the problem. "Scottish" and "British" identities and their interpenetrations are examined in the context of nationhood and statehood. The need to discuss the problem of identity is derived from the globalization process in the modern world as a result of which the elements of national culture, language and literature are endangered. Thus, in order to understand and fully appreciate each national linguistic-cultural system, it is necessary to adopt the study of identity as starting point, considering the problem in a broad context of identity formation, evolution and development.

О проблеме интерпретации шотландской идентичности

В статье обсуждается проблема шотландской идентичности со ссылкой на существующую постмодернистскую концепцию проблемы. В рамках исследования рассматриваются «шотландские» и «британские» идентичности, их взаимопроникновение в контексте национальности и государственности. Необходимость обсуждения проблемы идентичности вытекает из процесса глобализации в современном мире, в результате которого элементы национальной культуры, языка и литературы могут быть исчерпаны. Для понимания и исчерпывающей оценки каждой национальной лингвокультурной системы необходимо принять проблему идентичности как отправную точку, рассматривая ее в широком контексте – формирования, эволюции и развития идентичности.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrtyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrtyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // *Investigations in Linguistics*. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // *The European English Messenger*. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru